

ԲԱՌԱՔՆՆԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հ. Մ. ԱՄԱՅԱՆ

Երեմիա Մեղրեցու՝ 1698 թ. Ամստերդամում հրատարակված «Բառգիրք հայոց» բառարանի բնագիրը վերականգնելիս Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերի միջոցով ուղղել ու ճշգրտել ենք բաղմաթիվ բառահոգվածներ և առանձին բառեր:

Ստորև բերվում են բանասիրական ու բառաքնական բնույթի դիտողություններ, որոնք վերաբերում են միայն «Բառգիրք հայոցից» Հ. Աճառյանի Արմատական բառարանին անցած առանձին բառահոգվածների:

ԱՐՔՈԿ

Բառը սխալ է, պիտի լինի Արբոկ: Նույն «չորից» մեկնությունը ԲԳՀ ունի նաև Արբէէ: Ճիշտ ձևով բառը պահպանված է ԲԵ և ՄԱԵ բառարանների ձեռագրերում (№№ 4149, 9449 և այլն), որոնցից առաջինն ունի «Արբոկ. չորից» բառահոգվածը, իսկ երկրորդը՝ «Արբոկ. չորք»: Արբոկ-ը Քեբրոն քաղաքի հին անունն է (նաև գավառի անուն է), որը վկայված է Աստվածաշնչով. «Եւ մեռաւ

1 Կիրառված են հետևյալ համառոտագրությունները.

Արար.— արաբերեն:

ԲԳՀ.— Երեմիա վարդապետ, Բառգիրք հայոց, Ալիկոռնա, 1698:

ԲԵ.— Բառք եբրայեցոց:

ԲԽ.— Բառք խորանին:

ԲՀԱ.— Մխիթար Սեբաստացի, Բառարան յատուկ անուանց Աստուածաշունչ գրոց հին և նոր 4տակարանաց.— «Բառգիրք Հայկազեան լեզուի», հատ. 2, Վննետիկ, 1769:

ԲՅ.— Բառք յունարէն:

ԲՆ.— Բառք նարեկացոյն:

ԲՊԳ.— Բառք պիտոյից գրքի:

ԲՔ.— Բառք քերթողականք:

ДРС.— И. Х. Дворецкий, Древнегреческо-русский словарь, т. 1, 2, Москва, 1958.

Երր.— Եբրայերեն:

Թրք.— թուրքերեն:

ՀԱԲ.— Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հատ. 1—7, Երևան, 1927—1935:

ՀԲԲ.— Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հատ. 1—3, Երևան, 1944, հատ. 4, 1945:

ՀՆ.— հունարեն:

HW.— Carl Siegfried und Bernhard Stade, Hebraisches Wörterbuch zum Alten Testamente, Leipzig, 1893.

ՄԱԵ.— Մեկնութիւն անուանց եբրայեցոց:

ՆՀԲ.— Գ. Աւետիքեան, Խ. Սիրմէլեան, Մ. Աւգերեան, Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հատ. 1, Վննետիկ, 1836, հատ. 2, 1837:

ՓԲ.— Գ. Փէշտըմալճեան, Բառգիրք Հայկազեան լեզուի, հատ. 1, Կոստանդնուպոլիս, 1844, հատ. 2, 1846:

Ֆր.— ֆրանսերեն:

Սառա ի քաղաքի Արբոկա...» (Ծննդ., ԻԳ, 2), «Եւ անուն Քերբոնի էր յառաջ քաղաք Արբոկ» (Յեսու, ԺԴ, 15 և այլն)։ ԲՀԱ Աւրոկ (կամ Արբոկ) բառը մեկնում է որպէս «չորս, կամ բաղմական»։ Բառը ԲՆ բառարանից է անցել ԲԳՀ-ին և նրա ձեռագրերում էլ սխալագիր է դարձել։

ԱՆԱԿԱՆ

Այս բառն աղճատման արդյունք է։ Բաղմաթիվ ձեռագրերում կա ախտակրական։ ԲԳՀ-ի ախտատրական ձևը նույնպէս սխալ է։ Ախտակրական-ը նույն-արմատ ախտակիր, ախտակրեմ, ախտակրութիւն և այլ բառերի հետ միասին վկայված է հայ մատենագրութեան հնագույն երկերով (Կանոնագիրք և այլն)։ Բառի մեկնութիւնը պարզ է. նկատի է առնված հարութեանը նվիրված զատկի տոնը, որին նախորդում են Քրիստոսի, այլև նրա աշակերտների ու երկրպագուների վշտակրութիւններն ու ախտակրութիւնները։ Ախտակրական-ը (որ ձեռագրերը մեկնում են «տօն կամ զատիկ») հոմանիշ է հն. πασχα (φασεχ, φασεχ, բար. pasax) բառին, որ նշանակում է կիրի, շաբաթան, անց, անցարան, փրկութիւն շաբաթանաց և այլն։ Հետևաբար, եթե ախտակրական-ը = զատիկ = դժոխք, ապա այն ոչ մի կապ չունի ախտատրական բառի հետ։

ԱՆԱՐԿՈՍ

Ձեռագրերը տալիս են այս բառի զանազան գրութիւնները՝ անարկոս (№№ 533, 3468, ԲՅ 5596 և այլն), անարկոֆ (№ 451), անարգոս (№№ 535, 3274 և այլն)։ Ծիշտ է վերջինը, որն անարգո (—անարգու) բառն է ս հոդով և ոչ թե նորագոյնութառ է։

ԱՆՁՈՒ

Ձեռագրերում առկա են այս բառի նաև անչու (№ 451), անչուր (№ 450) և այլ ձևեր։ №№ 533, 8606 և այլ ձեռագրեր ունեն «Անչուշափ. անորոնելի» բառահոգվածը, որտեղ գլխաբառը անշոշափ պիտի լինի։ Իսկ ձեռագիր բառարաններում հաճախ հանդիպող անշոշափելի բառի կրճատ ձևն է։ ԲԳՀ բառարանը, բառերի շրջուն դասավորութեամբ, ունի նաև «Անորոնելի. անշոշափելի» բառահոգվածը, որը գալիս է ԲԵ և ԲՔ հին բառարաններից։ Հիշյալ բառարանները դրանք վերցրել են նարեկից (Բան Գ), որտեղ աստծուն որակելու և փառաբանելու համար, որպէս մակդիրներ բերվում են աննառելի, անտեսանելի, անզրննելի, անշոշափելի, անորոնելի և այլ բառեր։ Ընդ որում նարեկի այդ գլխի սկզբում խնդրո առարկա բառերը գործածված են կողք կողքի՝ անշոշափելի, անորոնելի դասավորութեամբ։ Հենց սրանք էլ անհայտ բառարանագիրը, հոմանիշներ համարելով, մտցրել է բառարանի մեջ՝ մեկը որպէս գլխաբառ, իսկ մյուսը որպէս նրա մեկնութիւն։ Բառահոգվածի աղճատումը տեղի է ունեցել դեռևս XIII—XIV դարերում. ԲԳՀ-ում առկա ձևով բառահոգված կա № 5596 (XII—XIII դդ.), № 4149 (1304—1305 թթ.) և այլ հնագույն ձեռագրերում։ Սկզբից աղճատվել է բառահոգվածը՝ իրարից բաժանվել են գլխաբառն ու մեկնութիւնը։ Ապա իր հերթին անշոշափելի բառն էլ աղճատվելով, բաժանվել է

երկու մասի՝ անշո և շափ: Այս աղավաղ բառերից առաջինը թյուրիմացաբար ընկալվել է որպես առանձին գլխաբառ, իսկ երկրորդը՝ մեկնություն: Այդպիսով առաջացել է «Անշո. շափ» կեղծ բառահոգվածը: Այդ բառերում Շ տառը կարգացվել է Չ (դա հաճախ է պատահում այդ տառերի նմանության պատճառով) և վերջապես ստացվել է «Անշո. շափ»: Հետո գրչադրումների ընթացքում առաջացել են անշու, անշուր, անշոռ կեղծ բառերը:

ԱՆՔԱՅ

Բառը անփառ պիտի լինի: Ձեռագրերում (№№ 535, 3172 և այլն) բառահոգվածն այսպես է՝ «Անփատ. նուաղ, կամ աղբատ»: Այլ ձեռագրեր աղփատ բառի փոխարեն ունեն աղօտ: Հետևաբար սլարդ է, որ մեկնությանը համապատասխան՝ գլխաբառը այլ բառ չի կարող լինել, քան անփատ: Մեկ բառահոգվածից հետո ԲԳՀ և այլ բառարաններում կա նաև «Անփատ. տկար, կամ կարօտ»: Կասկած չի կարող լինել, որ անփայ-ը անփատ-ի գրչագրական սխալ ձևն է:

ԱՊՈՂՓԱՅԵԼ

ԲԳՀ բառարանի «Ապողփայլեալ. տեղեկացեալ կամ իմացեալ» բառահոգվածում մեկնությունը ցույց է տալիս, որ դիտաբառը ճիշտ չէ: Այդ բառն աղավաղումն է Ապողփանէս անվան: Այս անձնանունը հիշատակվում է Աստվածաշնչում՝ «...և զՔերէոս եղբայր նորա, և զԱպողփանէս ի նոյն գուր փողոտեցին» (Բ Մակ., Ժ. 37): Հն. Ἀπολλοφάνης անունն է, որը կազմված է ἀπολλύω («ոչնչացնել, կորցնել») և φανω («ցույց տալ, հանդես բերել, տեղեկացնել, հայտնաբերել և այլն») բառերից: ԲՀԱ այդ բառը մեկնում է որպես «կորստեան յայտինչ, կամ ցուցանօղ»:

«ԱՐԷ. ՈՒՆԱՅՆ»

Որոշ ձեռագրեր «Արէօն. տապանակ, կամ երգ» բառահոգվածից բացի ունեն նաև «Արէ. ունայն» կեղծ բառահոգվածը, որն առաջացել է արէօն կամ արէունայ բառի աղճատումից: Բազմաթիվ ձեռագրերում (№№ 450, 540 և այլն) բառահոգվածն այսպես է՝ «Արէունայ և արէօն. տապանակ, կամ երգ»: Հիշյալ աղավաղումը չկա №№ 533, 537 և այլ ձեռագրերում: ԲՊԳ բառարանը (ձեռ. № 7035) ունի «Արեկ. ունայն, կամ աւելորդ»: Բառի իսկական ձևը արէօն կամ արէունայ է, որը ծագում է եբր. אֲרֹן («արկղ», տե՛ս HW) բառից:

ԱՐԻ

Այս ձևով բառը հանդիպում է միայն մի քանի ձեռագրերում: Մյուս ձեռագրերը (հատկապես հնագույն) հաստատում են բառի արկ («Արկ. կապիճ») ձևը, որը մեր կարծիքով պետք է ճիշտ համարել:

ԲԱԶԻՐ

Բառը պիտի լինի բազիրել, ինչպես բոլոր ձեռագրերում, բացի ԲԳՀ № 6568 ձեռագրից, որի մեջ բառի -ել բայական վերջավորությունը թյուրիմացաբար անհայտացել է:

ԲՈՋՈՒԿԱՆ

Պիտի լինի բոգական, ինչպես շատ ձեռագրերում (№№ 450, 3286 և այլն)։ Բառը, որ մեկնվում է «վատթարութիւն», նորահայտ, անստույգ բառ չէ, այլ սխալ ընթերցումն է բոգ արմատից ածանցված բոգական բառի։

ԴԱՂԱՊԱՐ

ԲՔ, ԲՅ, ԲԽ բառարանների հնագույն ձևափոխություններն «Դաղապր եւ մարտացու. սուսեր, կամ թուր, կամ տապար» (№№ 4149, 8198 և այլն) և «Դալապր. տապար» (№№ 530, 2369 և այլն) բառահոգովածները։ Գ-ի բառացանկում գլխաբառի սխալ գրությունը կա նաև «Դաղափ. և մարտոց. սուսեր, կամ թուր» (ձեռ. № 1495 և այլն) կեղծ բառահոգովածը։ Իրականում զաղափ բառ գոյություն չունի, այն աղավաղումն է դալապր բառի, որը գործածված է Դիոնիսիոս Թրակացու քերականության հայերեն թարգմանության մեջ. «Փաղանուն, որ ի վանաղան անուանս զնոյն ցուցանէ. որդոն խազ, դալապր, մարտացու, վաղա-կաւոր, սուսեր նրան» (տե՛ս Н. Адонц, Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915, էջ 19)։ Բերված քաղվածքում առկա են վերոհիշյալ բառահոգովածի բոլոր բառերը նույն դասավորությամբ։ Հետեվաբար դաղապար և մագր կեղծ բառեր են, որոնք առաջացել են դալապր և մարտացու բառերի աղավաղումով։

ԴՈՒՄԱՅ

ԲԳԸ-ի «Դումայ. բնակիլ, կամ նմանութիւն» բառահոգովածի դիմաց ԲՆ ունի «Դումա. նմանութիւն» (ձեռ. № 4149)։ Գլխաբառի «բնակիլ» իմաստը չեն տալիս նաև №№ 528, 537 և այլ ձեռագրեր։ Դումայ-ը եբբ. dāmā (սնման) բառն է, իսկ նմանութիւն բառին համապատասխանում է եբբ. dāmuth (սնմանութիւն, տե՛ս ԻՎ)։ «Բնակիլ» իմաստը թարգմանությունն է եբբ. dovr բառի, որը հավանաբար շփոթվել է dama կամ dāmūth բառի հետ։

ԵՆՈՎ

ԲԳԸ-ի «Ենով. մոռանալով» բառահոգովածում սխալ է գլխաբառը, որը Ենովս կամ Ենոս պիտի լինի, ինչպես շատ ձեռագրերում (№№ 541, 3169 և այլն)։ Բառը եբբ. Ենովս (Ենոս) անունն է, որ ԲՀԱ մեկնում է «այր, կամ մարդ մահկանացու, կամ մոռացեալ, կամ անյիշատակ»։

ԵՊԵԱԿ, ԵՊԲԻԱԿ, ԵՐԵԱԿ

Հնագույն, ինչպես նաև հետագա բաղմամբիվ ձեռագրեր (№№ 5596, 4149 և այլն) ունեն եպիակ։ Հենց այս բառն էլ պետք է ճիշտ համարել։ Եպիակ-ը հավանաբար ծագում է հն. επισυω «քսնլ» (որևէ բանի վրա) բառից։ Մյուս բառերը սխալադիր ձևեր են, որոնք հանդես են գալիս գլխավորապես ուշ շրջանի ձեռագրերում։

«ԵՒՓԻ. ԲՈՒՆ. ՅԱՂԱԴՍ ՈՐԲՈՅ Է»

ԲԳԸ-ի այս բառահոգովածն աղավաղումն է «Եւփիբան. յաղագս սրբոյ է» բառահոգովածի։ Գլխաբառը Եւփիբան ձևով կա №№ 450, 528 և այլ ձեռագրե-

րում, իսկ «յաղաղս սրբոյ է» մեկնությունը՝ №№ 533, 3172 և այլ ձևազրերում։
Նսիիբան-ը եպիփան անվան արտասանական մի ձևն է։ Այդ անվան տակ
պետք է հասկանալ Կիպրոսի եպիսկոպոս սուրբ եպիփանոս (կամ եպիփան)
Կիպրացուն (IV դ.)։

ՁԵՂԻՎ

Պիտի լինի զեղխիլ. ինչպես իրավացիորեն ենթադրում է ՀԱԲ (տե՛ս
Պոալ)։ Ձևազրերը (№№ 268, 3468 և այլն) ունեն զեխիլ։ Մի քանի ձևազրեր
(№№ 528, 450 և այլն) մեկնության մեջ ավելացնում են «տաղտկանալ» իմաս-
տը՝ «Պոալ. զեխիլ, կամ տաղտկանալ»։

ԸՆԴԻՐԱՆԴԻՐՍ

Սա նույնպես աղավաղման արդյունք է։ ԲՅ № 5919, ԲՔ №№ 4149, 5925
և այլ ձևազրեր ունեն «Ընդ իւ անգերս. Ընդ անմարմինս»։ Ձևազրերում չի
պահպանվել ճիշտ բառահոգվածը, որ պիտի լինի «Ընդ իւս. Ընդ անմարմինս».
ԲՔ բառարանն ունի «Իւ. անմարմին» բառահոգվածը։

ԹԵՏԱՆ

Ըստ հին ձևազրերի այս բառը քերսա պիտի լինի։ Ձևազրերում (№№ 451,
3172 և այլն) բառը կա նաև քերսա ձևով։ Դա երբ. քերսա բառն է, որն ըստ
ԲՀԱ նշանակում է «հաճեցեալ, կամ կամեցեալ, կամ քաղցր, կամ ընթերցող»։

ԹՈՒԳ

Այս բառը նույնպես սխալ է։ Բազմաթիվ ձևազրեր (№№ 3172, 3274 և
այլն) ԲԳՀ-ի համապատասխան բառահոգվածի դիմաց ունեն «Թուդ. ծագ, կամ
ծակ, կամ սպիտակ լեարդն»։ Այս նույն մեկնությամբ և գլխաբառի քոզ ձևով
բառահոգվածն առկա է №№ 535, 8606 և այլ ձևազրերում։ Գլխաբառը քոզ է
նաև հնագույն աղբյուրներում (ձեռ. №Ն 4149, 5925 և այլն)։ № 2335 (XV դ.)
ձևագիրն ունի «Թոզ. ծակ ծակ» բառահոգվածը։ Պարզ է, որ քուզ-ը ոչ թե
նորագույն և անստույգ բառ է, այլ քու՛ (թոզ) բառի արտասանական մի տար-
բերակն է։

ԹՈԹ

№ 3468 ձևազրում այս բառով կա «Թոք և քմբուկ. փոքր նաղարայ, կամ
դափ» բառահոգվածը։ Թոթ-ը եբբ. thof (thoph «թմբուկ») բառն է։

ԼԵՐԴԵԱԼ

Պիտի լինի լեղեալ, ինչպես №Ն 533, 3468 և բազմաթիվ այլ ձևազրերում։
Բառի լեղեալ ձևի ճիշտ լինելը հաստատում են նաև № 5126, 8456 և այլ ձե-
ռազրեր, որոնք ունեն «Լեքելոց. լքելոց, կամ ձանձրացելոց», ինչպես նաև
№ 534 ձևագիրը, որն ունի «Լեքել. լքել, կամ ձանձրանալ» բառահոգվածը։ Մի
շարք ձևազրերում (№№ 3468, 545 և այլն) մեկնության լեալ բառի փոխարեն
կա քուլացեալ։ Հմմտ. նՀԲ, Լեթիմ, ՀԲԲ, Լեթել, Լեթվել։

«ԽԱՂԱՅԵԼ. ԽԱՄԵԼ»

Բոլոր հին և հետագա ձեռագրերը մեծ մասամբ ունեն «Խաղածել. խաղալ» բառահոգվածը: Գլխարարի «խածել» մեկնությունը հանդիպում է միայն ԲԳՀ-ի XVII դ. ձեռագրերում: Այդ ձեռագրերից էլ (ամենայն հավանականությամբ № 1495-ից) բառը փոխանցվել է բառարանի տպագիր օրինակին:

ԿԱՆ

Բառը ծագում է եբր. qāin (կամ xānith «նիզակ») բառից:

«ԿԱՄՆԻՋԱՐ. ԿԱՐՄԻՐ ԿՈՒՌԱՍ»

Այս բառահոգվածը նույնպես թյուրիմացության արդյունք է և առաջացել է երկու առանձին՝ «Կան. նիզակ» և «Կարմի. ուղաս» բառահոգվածների միացումից ու աղավաղումից: Հին ձեռագրերում այդ աղավաղումը չկա և բառահոգվածները անխաթար են մնացել: ԲՅ բառարանի հնագույն (նաև հետագա) գրչադրերում (№№ 5596, 8198, 530 և այլն) հիշյալ երկու բառահոգվածները կան առանձին, որպես ինքնուրույն բառարանալին միավորներ: Երկրորդ բառահոգվածը («Կարմի. ուղաս») առաջինին առնթեր լինելուց բացի առկա է նաև բառացանկի մեկ ուրիշ տեղում: Առաջին բառահոգվածը ճիշտ է (տե՛ս վերևում Կան բառի մասին), իսկ երկրորդը, որի «ուղաս» մեկնությունը ձեռագրերում հանդիպում է նաև կուռաս (№№ 3171, 451), կուռաս (№№ 8606, 7117), կուս (№ 8292) և այլ ձևերով, դեռևս կասկածելի և անորոշ է: Սակայն նկատի ունենալով, որ ԲՅ բառարանի հնագույն ձեռագրերը հաստատում են ուղաս ձևը, այն ճիշտ ընդունելով, կարելի է ենթադրել, թե ծագում է հն. 𐎧𐎠𐎢𐎡𐎴 («հող, դետին») բառից:

«ԿԱՅԼԱԿԵԼ. ԿԸՄՆԵԼ»

Կրոնել բառի փոխարեն ձեռագրերում (№№ 450, 3172 և այլն) կա կլանել: Այսինքն բառահոգվածը «Կայլակել. կլանել» է: ԲԳՀ-ում կրսնել-ը վրիպակ ունի. լա տառակապակցության մեջ ա-ի ձախ կողմի դժիկն անջատվելով միացել է լ-ին և այդպիսով լ-ն դարձել է ո, իսկ ա-ն՝ ս (նման վրիպակներ հաճախ են առաջանում տառերը իրար շատ մոտ, սեղմ գրելու և այլ դեպքերում): Ուրեմն կրսնել-ը նույնպես նորագլուտ, անվավճար բառ չէ:

«ԿԱՇԱՅԵԼ. ԿԱՓԵՏԵԼ»

Ձեռագիր բառարանները և ԲԳՀ (տպագիր) այս բառահոգվածից բացի ունեն նաև «Կաշիտէ. կափատէ»: Հնագույն աղբյուրներում (ձեռ. №№ 4149, 2371, 3202 և այլն) գլխաբառը կաշեալ է: Հետագա մի շարք ձեռագրերում (№№ 450, 528 և այլն) բառը մեկնվում է որպես «վիակետէ», այսինքն՝ «ծրարէ» (փակետել—ծրարել): Հետևաբար բացահայտվում է գլխաբառի իմաստը, պարզվում է նրա ճիշտ ձևը, որն, իրոք, կաշեալ պիտի լինի: Այդ բառերի (կաշեալ, փակետէ) ճիշտ լինելն են հաստատում շատ ձեռագրեր (№№ 268, 537 և այլն), որոնք ունեն «Կաշալել. կոփել» բառահոգվածը: Կաշալել-ը կաշեալ-ի մի տարբերակ է (գուցե գրչադրական վրիպումով), իսկ կոփել-ը իրոք, այս

դեպքում, հոմանիշ է փակետել-ին, նույն բառացանկի համապատասխան տեղում մեկնվում է նաև կոփել-ը, որպես գլխաբառ՝ «կոփել. դնել, կամ հաստատել»։ Ուստի կաշետել=կոփել։ Կասկած չի մնում, որ փակետել (այսինքն՝ ծրարել) մեկնությունը ճիշտ է և նրան համապատասխան՝ գլխաբառն անպայման պիտի լինի կաշետել, որը ծագում է ֆր. cachet («կնիք») բառից։

ԿԱՏԱԳԱՀԵԼ

Բառն աղավաղված է, ճիշտ ձևով պահպանված է բաղմաթիվ ձեռագրերում (№№ 533, 3172 և այլն), որոնք ունեն «Կատահակել. կաղդուրել», Կատահակել. կաղդուրել, կամ դիւրել», «Կատահակել. կաղդուրել և հաստատել» և այլն, ինչպես տեսնում ենք, բոլոր դեպքերում գլխաբառը կատահակել է։

«ԿԱՐԿԱՐԵԱՅ. ԶԱԶԵԱՅ»

Բոլոր հնագույն (№№ 4149, 8198 և այլն), այլև հետագա մի շարք ձեռագրերում բառահոգվածը «Կարկարեաց. վաղեաց» է, Ուրեմն կարկարել նշանակում է վազել։ Սխալագիր զազեաց բառը, որ հայտնի է XIV դարից (ձեռ. № 3937), այնուամենայնիվ, լայնորեն չի տարածվել և առկա է միայն ուշ շրջանների մի քանի ձեռագրերում։

ԿԵՂՏԱՇՏ

Սա նույնպես կեղծ բառ է, որ առաջացել է երկու տարրեր բառահոգվածների բառերի թյուրիմացական միացումով և աղավաղումով։ ԲԳՀ-ում միացված են «Կեղտ. աղտ» և «Կեղտանուն. վատանուն» բառահոգվածները, որոնք որպես ինքնուրույն միավորներ անխաթար կերպով պահպանված են բաղմաթիվ ձեռագրերում (№№ 3172, 328 և այլն)։ Կեղտաշտ-ը, ինչպես երևում է, առաջացել է առաջին բառահոգվածի կեղտ և աղտ բառերի միացումից (երկրորդ բառի մեջ Ղ-ի շ ընթերցումով)։

ԿՈՐՏՔ

ՀԱԲ-ի ենթադրությունը այս բառի կորկ լինելու վերաբերյալ իրավացի է. շատ ձեռագրեր (№№ 450, 520 և այլն) ունեն «Կորկկ. աղտք» բառահոգվածը և «Կորկկ. աղտք, կամ կեղտք» (№№ 451, 533 և այլն)։ Ուրեմն կորտք-ը գըր-շագրական վիպման հետևանքով առաջացած կեղծ բառ է։

ԿՈՒԷ

Սա հատուկ անուն է, որ հիշատակվում է Աստվածաշնչում. «Զորդիսն Բարեւացւոց, և զամենայն բաղդեացիսն, զփակուղ և զսուէ և զկուէ, և զամենայն որդիսն Ասորեստանեայց ընդ նոսա...» (Ծղեկ., ԻԳ, 23)։ ԲՀԱ այդ բառը (փակուղի բառահոգվածում) մեկնում է որպես ազնուականք, բոնաւորք, իշխանք, այցելու և այլն։ Հետեւաբար Կուէ նույնպես նորագյուտ ու անվավեր բառ չէ։

«ՀԱՍ. ՏԻԻ»

Ձեռագրերն ունեն «Հաս. տի», «Հաս. տիբ» (№ 8606), «Հաս. չալի» (№ 528) և այլն: Հետևաբար ՀԱԲ ենթադրությունը տիւ-ը տիւ քնթերցելու վերաբերյալ իրավացի է: Հաս-ը հասակ-ի կր. ատումն է, իսկ տիւ-ը տի (տիբ)-ի սխալ գրությունն է:

ՀԱՍԵԻՀԱԿԱՅ

Հնագույն (№№ 4149, 3937 և այլն), ինչպես նաև հետագա շատ ձեռագրեր ունեն «Հաս և հակ. պատասխանի», «Հակ. պատասխան» բառահոգվածները: Կա նաև՝ «Հակ. զուգորդ» (ձեռ. №№ 4149, 3202 և այլն): Հիշյալ բառահոգվածները միացնելով, անհայտ բառարանագիրը կազմել է նաև «Հակ. պատասխանի, կամ զուգորդ» (ձեռ. №№ 1495, 3199 և այլն): Կա նաև «Հասողական. պատասխանական» բառահոգվածը (ձեռ. №№ 1495, 6568 և այլն): Գլխաբառը ձեռագրերում ունի նաև հասուհաս (№№ 5919, 2335), հաս և հակա (№ 3202) ձևերը: Ծիշտ գլխաբառը հաս և հակ է: Ընդ որում այդ բառը հարադիր բարդություն չէ. նրա բաղադրիչները ինքնուրույն բառեր են (բառարաններում՝ ինքնուրույն գլխաբառեր), հոմանիշներ, որոնք միացված են շաղկապով: Հակայ և հակա բառերը հակ-ի տարրնթերցվածներն են:

«ՁՆՁԻԹ. ՁՆԳՐԻԹ»

Մի շարք ձեռագրերում (№№ 450, 3172 և այլն) կա «Ձնձիթ. ձնգրիթ, կամ ծղրիթ» բառահոգվածը: Ուրեմն հայտնի դարձավ, որ ձնձիթ և ձնգրիթ բառերը նշանակում են «ծղրիթ» (ծղրիդ): Այդ բառերը, որ մինչև այժմ անծանոթ ու անվավեր էին՝ ծղրիդ բառի արտասանական տարբերակներն են:

ՂԵՂ

Հնագույն ձեռագրերում (№№ 4149, 5925 և այլն) բառը ոչ թե ղեղ է, այլ ղեղհարաւ՝ «Ղեղհարաւ. հակառակեցաւ, կամ դառնացաւ»: Գլխաբառը (ղեղ) ղեղի (-լեղի) արմատից բարդված բառ է և ոչ թե նորագյուտ, անստույգ մի բառ:

«ՂԵՄԻՆ. ՄԱՐԳ»

Բառահոգվածը № 451 ձեռագրում այսպես է՝ «Ղեմին. մարք, կամ ջմջմայ»: Մեկնության ջմջմայ բառն արդեն բավական է նախորդ բառերի իմաստը բացահայտելու համար: Ջմջմայ նշանակում է թաց, ջրոտ մարդագետին, եղտյուր: Այդ բառը հանդիպում է նաև «Ճախ. մարդ, կամ չիման, կամ ջմջմայ», «Մարդ. խոտահարք, կամ չիման, կամ ջմջմայ» և այլ բառահոգվածներում: Ինչպես տեսնում ենք, մարք-ը նշանակում է մարգ, որը բերված բառահոգվածներում հոմանիշ է մարգագետին և ջմջմայ բառերին: Հետևաբար ղեմին նույնպես նշանակում է մարգ, մարգագետին: Իմաստը պարզելուց հետո որոշվում է նաև գլխաբառի ծագումը՝ ղեմին հն. 𐎧𐎠𐎢𐎡𐎹 (մարգագետին) բառից է ծագում:

ՂՈՄՈՍ

Ձեռագրերը (№ 3172 և այլն) տալիս են այս բառի նաև Ղումոս և այլ ձևեր: Այգ բառը, որ բառարանները մեկնում են «եղուկ» կամ «եղկելի», ծագում է հն. ܐܠܘܝܘܢ («եղուկ») բառից:

ՃԱՅԻՆ. ՍԵՎ. ՃՈՌՈՄՈՒԹԵԱՄԲ

ԲԳԸ-ի այս բառահոգվածն էլ աղավաղում է: «Բառք հայոց» բառարանը (ձեռ. № 739) ունի՝ «Ճային. սև» և «Ճոռումութեամբ. ճարտարութեամբ» բառահոգվածները: Այս երկուսն իրար միանալով ու աղավաղվելով առաջացրել են վերոնշյալ կեղծ բառահոգվածը: Մյուս ձեռագրերում (№№ 3468, 533 և այլն) կա «Ճայ. սև»: Սա էլ լրիվ չէ և պարզապես կրճատումն է իրեն հաջորդող «Ճայ. թռչուն սեաւ, փոքր քան զագռաւ» բառահոգվածի: Բն բառարանն ունի «Ճային. սեաւ թռչուն» (ձեռ. № 3286):

ՄՈՍ

Անհայտ բառարանագիրն անշուշտ նկատի ունի Մուսի անունը, որ հիշատակվում է Աստվածաշնչում՝ «Եւ որդիք Մերարեայ ըստ գունդս իւրեանց Մողղի, և Մուսի» (Թիւք, Գ, 20, 35, ԻԶ, 50 և այլն): ԲՀԱ Մուսի (Մոսի) բառը մեկնում է «ի բաց բարձող, կամ շօշափող. կամ հեռացեալ, կամ բարձրացեալ»: Մոս-ը ծագում է եբր. מֹשֶׁה («շոշափել») բառից:

«ՅԵԿԿՈՆ. ՓՐԿՈՒԹԻԻՆ. ԿԱՄ ՓՈՔՐԿՈՒԹԻԻՆ»

Մի շարք ձեռագրեր (№№ 3468, 8606 և այլն) ունեն «Յեկկոն և եկտան. փոքրկութիւն» կամ «եկտան. փոքրկութիւն» (№№ 5126, 5995 և այլն): Վերջին բառահոգվածը կա հնագույն ձեռագրերում՝ ԲԵ (№ 4149) բառարանում: Լեկնության մեջ վրկութիւն բառն ավելորդ է, գլխաբառն այդ իմաստը չունի:

«ՅՕԴԹԵԼ. ՀՐԱՄԱՅԵԼ»

Սխալ է այս բառահոգվածի «հրամայել» մեկնությունը: Ձեռագրերը (№№ 450, 3172 և այլն) ունեն «Յօդթել. հմայել» կամ՝ «Յօդթել. հմայել կամ դիւթել»: Վերջին բառահոգվածի «դիւթել» իմաստը ցրում է բոլոր կասկածները և որոշակիորեն ցույց է տալիս, որ հրամայել-ը հոմանիշ չէ յօդթել գլխաբառին, այլ պարզապես հմայել-ի սխալ ընթերցումն է:

ՆԱՅԿԱՄ

Հնագույն ձեռագրերը տալիս են բառի նաև նակամ ձևը (ԲԵ, № 4149), որը ճիշտ է: Նակամ-ը (կամ նայկամը), որը բառարանները մեկնում են «սպարտութիւն», անշուշտ ծագում է եբր. מַכָּה («սպարտութիւն») բառից:

«ՆԻԻԱՆԴԱԿ. ԴԷՏ. ԿԱՄ ՊԱՀՊԱՆԱԿ»

Ձեռագրերը (հատկապես հնագույն) մեծ մասամբ դէտ բառի փոխարեն ունեն տէգ: ՀԱԲ (ՓԲ-ից վերցնելով) ունի նաև «նիանդակ. տէգ, նիզակ»:

Նիւանդակ-ը հոմանիշն է նիւանդակի: Հետեւաբար վերևում բերված բառահոգ-վածի մեկնության մեջ դէտ-ը տէգ-ի սխալ գրչագրական ձևն է:

ՈՂՋԱԳԻՐ

Պետք է լինի ողջագեր, որպէս է գրեթե բոլոր հնագույն ձեռագրերում (№№ 4149, 2371 և այլն) կամ ողջագլէր, ինչպես հետագա ժամանակների բաղ-ւթիվ աղբյուրներում (№№ 528, 3468 և այլն):

«ՈՒՄԱՆԱԿ. ԽՈՒՄԱՆԱԿ»

№ 3468 ձեռագրում կա «Ումանակ. խումանակ, կամ ջրաման»: Ուրեմն խումանակ (խմանակ) նշանակում է ջրաման: Բառերը կազմված են խում ար-մատից, ինչպես ումպ-ից՝ րմպանակ: Ումանակ-ը հավանաբար խումանակ (խմանակ) բառի բարբառային մի արտասանություն է:

ՊԱՐԱԿԵՂՏ

Պիտի լինի պարակետը: Հնագույն և հետագա բաղմաթիվ ձեռագրերում (№№ 5596, 7117, 8198 և այլն) բառը պարակետը է: Կան այդ բառի նաև պարակել (ձեռ. №№ 3197, 3207 և այլն) և պարկետը (ձեռ. №№ 2291, 2379 և այլն) ձևերը: Պարակելո ձևը վկայող հնագույն ձեռագիրը № 5925 (XV դ.) ժողովածուն է, որից ծագում են №№ 3200, 1654 և այլ ձեռագրեր: Ճիշտ է հնա-գույն ձեռագրերով վկայվող պարակետը բառը, որը ՓԲ մեկնում է «տեղի պա-րուց և հաւաքման, ժողովետդ», իսկ ՀԲԲ՝ «պարելու տեղ»:

ՊԱՐԱՐԿՕՂ

Շատ ձեռագրերում (№№ 3286, 3169 և այլն) բառը պարագրոդ է՝ «Պա-րագրոդ. փորագրող»: Կա նաև «Պարագրաբար. շրջագրաբար» բառահոգվածը: Հետեւաբար ճիշտ է պարագրոդ բառը, իսկ պարաբկոդ-ը, որը կապ չունի գրել բառի հետ, սխալ է և չի համապատասխանում «փորագրող» մեկնությանը:

ՊԱՐՈՅԱՄ

Այս բառի փոխարեն ձեռագրերը (№№ 5925, 3202 և այլն) մեծ մասամբ ունեն պարայած, որը և ճիշտ է: Բառահոգվածը № 4149 ձեռագրում «Պարայած. ժողովետդ» է:

ՊԻՐՏ

Բառը սխալ է, պիտի լինի պիրկ: Հնագույն (№№ 8198, 7117 և այլն) և հետագա բաղմաթիվ ձեռագրերում այդ բառը պահպանվել է իր իսկական՝ պիրկ ձևով՝ «Պիրկ. ծանր, կամ կարծր»:

ՊՌԱՌԵԱԼ

Ձեռագրերի մեծ մասը տալիս է այս բառի պոստել (№№ 4149, 3468 և այլն) կամ պոտտել (№№ 451, 537 և այլն) ձևը: Դժվար է ասել, թե որն է հիշյալ ձևերից ճիշտը, բայց նախընտրելի է հնագույն ձեռագրերով վկայվող և առավել շատ աղբյուրներում առկա պոստել բառը:

ՊՈՒՍԵԼ

Այս բառը նույնպես սխալ է և պուսել պիտի լինի, ինչպես №№ 4149, 3172 և բազմաթիվ այլ ձեռագրերում, որոնցում առկա է «Պուսել. ստել» բառահոգ-վածքը: Պուսել-ը առաջացել է ասլուսել (ապուսեմ) բառից (որը նշանակում է «բացասել, ժխտել, ուրանալ»)՝ բառասկզբի ա ձայնավորի անկումով:

ՊՐԱԿ

Այս բառը («Պալեի. պրակ փոքր» բառահոգվածում) պետք է լինի կրակ, որ պրակ է դարձել ուշ շրջանի գրչագրերում: № 533 ձեռագիրը «պրակ փոքր» մեկնությունից անմիջապես հետո ավելացնում է՝ «Միսն կրակ փոքր էր գրած»: Այսինքն՝ պրակ-ի փոխարեն կրակ է գրված եղել այն ձեռագրում, որից արտագրված է № 533-ը: Այդ ձեռագիրը, որ անշուշտ հին է եղել, մեզ հայտնի չէ: Սակայն բոլոր հնագույն (№№ 4149, 5596 և այլն), այլև հետագա բազմաթիվ ձեռագրերում (№№ 3286, 3169 և այլն) գլխաբառը (պայելի) մեկնվում է «կրակ փոքր»: XVII դ. մի շարք ձեռագրեր (№№ 537, 3468 և այլն), որոնք ծագում են տարբեր մայրօրինականներից, համատեղում են գլխաբառի երկու մեկնությունները՝ «Պալեի. պրակ փոքր, կամ կրակ փոքր»:

«ՍԱՄԲԱԿ. ԲԱՌ»

Հնագույն ձեռագրերը (№№ 2371, 5925 և այլն) ունեն «Սամբակ. վառ» բառահոգվածք: Գլխաբառն առկա է սամակի (ձեռ. № 4149), սամակ (ձեռ. № 5008) և այլ ձևերով, բոլոր դեպքերում «վառ» մեկնությամբ:

«ՍԵՂԷՕՐԷ. ԵՂԵԱՄՆ»

Սա աղավաղված բառահոգված է: Հնագույն ձեռագրերն ունեն «Սեղեաուր. եղեամն» (№№ 4149, 3937 և այլն), «Սեղե. աւրէն» (№ 5925), «Սեղե. աւր», «Սեղե. ամն» (№ 5919) և այլն: Հետագա ձեռագրերում կա «Սեղե. օրէն, եղեամն» (№№ 451, 8292), «Սեղեօրէն. եղեամն» (№№ 3172, 3468 և այլն): Ինչպես ականառու է, գլխաբառը (նաև մեկնությունը) ձեռագրերում զանազան ձևեր ունի և հեշտ չէ այն վերականգնելը: Գրեթե բոլոր դեպքերում առկա է «եղեամ» մեկնությունը, որի ճշտությունը կասկածելի չէ և նրա վրա հիմնվելով էլ պարզվում է գլխաբառի ինչ լինելը: Բառահոգվածքը նախապես, ամենայն հավանականությամբ, եղել է «Սեղե. որ է եղեամն»: Մեկնության «եղեամ» բառը նույնությամբ պահպանվել է, իսկ «որ է»-ն միանալով գլխաբառի հետ տվել է սեղեուրէ կեղծ բառը, որն աստիճանաբար փոփոխվելով դարձել է սեղեօրէն, սեղեօրէ և այլն: Ուրեմն գլխաբառը նախապես ճիշտ ձևով եղել է սեղէ կամ սեղի, որը և ծագում է արաբ. سِلْج (սեղյամ) բառից:

ՍՏՈՐՓԱՅՈՒԹԻՒՆ

Հնագույն ձեռագրերում (№№ 4149, 3937 և այլն) բառը ստուփալուրին է: Այդ (և հետագա) ձեռագրերում կա նաև «Ստուփալ. ստել» բառահոգվածք: Գարծում ենք, որ երկու գլխաբառն էլ (ստուփայություն և ստուփալ) կազմված են միևնույն ստուփ արմատից: Հետևաբար ստուփալուրյունը (որն ըստ ՀԱԲ

սկետք է կապել ստոր բառի հետ) սխալ ձև է և այն չի կարելի հանգեցնել ստոր արմատին:

ՎԱՀ

ՀԱԲ իրավացի կերպով ենթադրում է, թե այս բառը վաղ պիտի լինի: Վահ-ը իրոք սխալ է: Հնագույն (ՄՄ 8198, 5596 և այլն), ինչպես նաև հետագա բաղմամբիվ ձևադրերում բառն առկա է իր նախնական ճիշտ՝ վաղ, ձևով:

«ՎԱՅԼ. ԳԻԼՐ»

Բառահոգվածն աղավաղված է, ձևադրերը հնարավորություն չեն տալիս այն լրիվ վերականգնելու համար: Գրելիք բոլոր հնագույն և հետագա շատ ձևադրերում (ՄՄ 8198, 4149, 8106, 8456 և այլն) բառը մեկնվում է «գիր» և այն «գիրը» է դարձել ԲԳՀ-ի անհայտ ձևադիր օրինակներում կամ տպագրության ընթացքում:

ՎԱՏՈՒՏ

Բոլոր հնագույն (ՄՄ 5596, 7117 և այլն), ինչպես նաև հետագա բաղմամբիվ ձևադրերում բառը վատուկ է: Վատուտ-ը գրչագրական սխալի հետևանք է, որ հանդիպում է Մ 6624 ձևադրում և ԲԳՀ (տպագիր) բառարանում:

«ՅԻԻԱՅ. ՍՐՍՈՒՌ»

Բառերի իմաստը բացահայտում է Մ 3468 ձևադիրն իր «Յիւայ. սրսուռ, կամ սլուղ» բառահոգվածով: Յիւայ և սրսուռ նշանակում են պուղ (թրք.), այսինքն՝ սառույց:

ՓԱՂԱԽ

Հնագույն ձևադրերը (ՄՄ 8198, 2371 և այլն) այս բառի փոխարեն ունեն փաղառ: Մի քանի ձևադրերում կա փառ, որը պարզապես փաղառ-ի կրճատ ձևն է: Փաղառ-ի ճշտությունն է հաստատում փաղառութիւն բառը՝ «Փաղառութիւն. սերմնառութիւն» բառահոգվածում:

ՓԱՂԵՐԵԱՅ

Ձևադրերում առկա են այս բառի ղանաղան դրույթուններ՝ փաղերեա (ՄՄ 8198, 2371), փաբերեա (Մ 5919), փաղերեց (Մ 4149) և այլն: Թվում է, թե այդ բառերից ճիշտ է փաղերեց-ը, որը կարելի է կապել երէց բառի հետ:

ՓԱՂԿԵԼ

Այս բառի փոխարեն հնագույն ձևադրերը (ՄՄ 4149, 3937 և այլն) ունեն փաղրել, իսկ Մ 2202-ը՝ փաղփել:

ՓԱՅԱՐ

Բն բառարանի Մ 4149 ձևադրում բառը փաամ է: Ծիշտ է փայամ բառը, որը թերևս ծագում է երբ. 𐎱𐎠𐎼 («ժամանակ») բառից:

ՓԱՐԱԽԱՐԱՑԵԱԼ

Ձեռագրերի մեծ մասում (№№ 3937, 8198 և այլն) բառը փառաւարացեալ է: Փառաւարացեալ-ը սխալ է, որ առաջին անգամ հանդիպում է № 2371 ձեռագրում:

ՔԱՂԹԱՐԱՅԵԼ

Հին և հետագա բաղմամբիվ ձեռագրերում (№№ 4149, 3286 և այլն) կա քաղ-բաւրել: Քաղքաւրել-ը ուշ շրջանի ձեռագրերում առաջացած սխալագիր ձև է:

ՔԱՏԱՅՈՒՄՆ

Շատ հավանական է, որ այս բառը ծագում է եբր. xathāh («մեղք») բառից:

ՔՈՂԻՑՆՕՂ

Պիտի լինի բոռիցնօղ, որը ծագում է բոռին բառից: Քոռին Հովաս արքայի քաջ թիկնապահ զորականների մի դասի անունն է, որ հիշատակվում է Աստվածաշնչում (Դ թագ., ԺԱ, 4, 19): Սակայն բառը բոռիցնօղ ձևով չի հանդիպում ձեռագրերում: Բառարաններում կա նաև «Քոռին. դասը քրիստոնէից», որով հաստատվում է բոռիցնօղ բառի ճշտությունը:

ՔՐԷՖԷՐ

Սա աղավաղված բառ է, որ ձեռագրերում հանդիպում է զանազան ձևերով՝ քֆեր (№№ 450, 3172 և այլն), քֆրէ (№ 528), քէր (№№ 535, 3286 և այլն), քրէ (№ 5126), քրէր (№№ 537, 8606 և այլն): Սրանցից ճիշտ է միայն վերջին՝ քրէր բառը, որը քր. քրէր բառն է: Այդ բառի աղավաղումը տեղի է ունեցել ԲԳՀ-ի երկրորդ խմբագրության ձեռագրերում (№№ 1495 և 5668) և նրանցից էլ անցել է տպագիր օրինակին:

ՕԴՈՏ

Ձեռագրերի մեծ մասում (№№ 533, 3468 և այլն) բառը օղուկ (աւղուկ) է: Կան նաև օղուկ (ձեռ. №№ 451, 2294 և այլն), օղղակ (ձեռ. №№ 3172, 535 և այլն), օղղուկ (ձեռ. № 450), օղղուկ (ձեռ. № 3274) և այլ ձևեր: Օղոտ-ը սխալ գրություն է, որն առկա է միայն ԲԳՀ-ի երկրորդ խմբագրության ձեռագրերում (№№ 1495, 3468) և տպագիր օրինակում:

ՔԵՌԻՆՈՍ

Սա նույնպես սխալ բառ է, որ ձեռագրերում հանդիպում է նաև քեռոնէս, քեռոնիոս, քեռոնէսս, քեռոնէ, քեռոնէ և այլ ձևերով: Ճիշտ է քեռոնէսոս-ը, որը կա №№ 528, 1495 և այլ ձեռագրերում:

«ՔՆԱԽՈՐԵԼ. ՀԻՄՆ»

Ձեռագրերը (№№ 533, 3468 և այլն) բառը մեկնում են «հիմնել», իսկ № 3286-ը՝ «հիմնադրել»: Այլ մեկնություններ չկան և ճիշտ պետք է ընդունել

հին և հետագա բազմաթիվ ձեռագրերով վկայված «Քնարեկ. հիմներ» բառահոգովածը:

ՔՈՂԱՓՈԻՆԴՐ

Հնագույն և հետագա ձեռագրերը, բացառությամբ մի քանիսի (№№ 451, 3287 և այլն), ունեն փոփոխություններ, կարծում ենք, ձիշտ պետք է համարել ոչ միայն հնագույն աղբյուրներով վկայված լինելու համար, այլև նկատի ունենալով փոփոխությունները, որ դարձյալ առկա է հնագույն աղբյուրներում:

ЛЕКСИКОЛОГИЧЕСКИЕ ЗАМЕТКИ

Г. М. АМАЛЯН

(Резюме)

На основании рукописей Матенадарана восстановлен первоначальный текст первого армянского печатного толкового словаря Еремии Мегреци, изданного в 1698 г. Исправлены и уточнены многие словарные статьи, а также отдельные слова. Составлен новый текст словаря. Приведенные в статье уточнения касаются слов, перешедших в этимологический словарь Р. Ачаряна.